

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/4**

**19 հուլիսի 2016թ.**

Քննարկվեց Ա/Ձ Վաչագան Ներսիսյանի գանգատը նվազագույն սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունների դեմ:

#### **Ա/Ձ Վաչագան Ներսիսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Վաչագան Ներսիսյանը հայտնում է, որ 28.04.2011թ-ին գրանցվել է պետական ռեգիստրում, սակայն փաստացի գործունեություն (գործարք) չի իրականացրել, չունի ՀԴՄ և գործունեության հասցե, սակայն նվազագույն սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկվել են պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վաչագան Ներսիսյանը խնդրում է չեղյալ համարել նվազագույն սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունները:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Վաչագան Ներսիսյանը պետական ռեգիստրում գրանցվել է 28.04.2011թ-ին: Նշվեց նաև, որ Ա/Ձ Վաչագան Ներսիսյանի նկատմամբ 2011թ-ի ապրիլ ամսից մինչև 2012թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկվել են պարտավորություններ՝ ընդհանուր գումարով 162.477 դրամ, այդ թվում՝ ապառք 105.000 դրամ, տույժ 57.477 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012թ. գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վաչագան Ներսիսյանը պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները հաշվարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Վաչագան Ներսիսյանի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել օրենսական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչապետի գաստարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ